

Ա. Հ. ՄՈՒԾԵՂՅԱՆ

Վերջերս առիթ ունեցանք ծանոթանալու պրոֆ. Ա. Մարգարյանի՝ **շնթեկ** բառի ստուգաբանությանը (ԲԵՀ, 1984, թ. 3, էջ 181): Ցավոք պիտի արձանագրել, որ հարգելի լեզվաբանի երևակայական-պատկերավոր մեկնությունը հենվում է ժողովրդական ստուգաբանության փորձերի վրա (Հր. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, էջ 884. Նո. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, էջ 524), որոնք «վերջնական տեսքի» բերելով ներկայացնում է իբրև ***շանթառեկ**, որն արտահայտել է ըստ նրա «շան պես մի տեղ երկար նստել մնալու, պտուկել քնելու, փովելու և վեր չկենցալու և այլ իմաստներ» (Ա. տ., էջ 181): Սակայն Ա. Մարգարյանի բերած տարբերակները՝ **շնթոնեկ**, **շնթոռեկ**, **շնթոտեկ**, պարզորոշ ցույց են տալիս, որ բարդության երկրորդ բաղադրիչը միանշանակ չէ և ընդհանրապես չի կարող կապվել **թառեկ** բայի հետ: Ինչևէ, սա մի հարմար առիթ է՝ խորհելու նման կազմությանը բայերի գործառական և ծագումնաբանական որոշ կողմերի մասին: Մեզ համար լիովին ակնհայտ է, որ **շնթեկ**-ը նույնպիսի կազմություն է, ինչպես գրք. **առնուկ** և **առնել** բայերով հարադրված ձևերը, օր. **ակն առնուկ**, **աղաչթա առնել**, **աշխատ առնել**, **բաժ առնուկ**, **զեն առնուկ**, **կասկած առնուկ**, **համար առնել**, **մարտին առնուկ**, **մեղս առնուկ**, **լպտ առնել**, **լաճն առնուկ**, **շունչ առնուկ**, **վրժ առնուկ** և այլն, այս դեպքում՝ համադրական կազմությանը, որ սովորական երևույթ է լեզվի զարգացման հոլովություն: Ինչպես գիտենք, գրք. **առնուկ** և **առնել** բայերը տարբեր իմաստ ունեն: Եվ ահա, միջին հայերենում, թերևս, բայական լծորդությունների ազատ փոխանցմամբ պայմանավորված բաղադրության շնորհիվ այդ տարբերությունը կրելով ձևաիմաստային փոփոխություններ, որոշ առո.մով հարթվել է: Այսպես, գրք. **առնուկ**-ը վերածվել է **առնել**-ի, որն էլ հանդիպում է՝ **արնել**, **այրնել**, **այնել**, **անել**, **էնել**, **ընել** գրչագրական տարբերակներով («Ակնհարկներ միջին գրական հայերենի պատմության», 1972, հ. 1, էջ 151): Այս լեզվական շրջանում ևս հաճախուհեպ են նման կազմությունները՝ և՛ համադրական, և՛ վերլուծական տարբերակներով. **փթեկ**, **քամեկ**, **բուշտ առնել**, **խոջ առնել**, **անգամ սովորական** է փոխառյալ հիմքերից (զմայթ **առնել** > զմայթեկ, կամ՝ **առնել** > **կամշեկ**) ստացումը: Ինչ վերաբերում է շնթեկի բային, սա էլ գրք. **հարկ(ան)ել** բայով բաղադրված ձև է՝ օրինաչափ հնչյունական փոփոխություններով:

Այս ամենը թույլ է տալիս մեզ որպես բարդության առաջին բաղադրիչ վերականգնել **շունթ** ձևը և ամբողջը՝ **շունթ առնուկ**, դիտել իբրև գրք. **շունչ առնուկ** բայի զուգածն (թ/շ անցման համար կարելի է բերել **աղաչթ/ աղաչ-եմ**, **ամաչթ**, **ամաչ-եմ** օրինակները): Բայց և այնպես, ներքին վերականգնումը, համոզված ենք, բավարար չէ: Անհրաժեշտ են այլ կովաններ, որոնք մեզ տրամադրում է արտաքին համեմատական քննությունը: Այսպես. **շունթ/շ**-ը իբրև արմատական բառ, ծագումնաբանորեն պատկանում է նույն իմաստային դաշտին, ի՞նչ և **քրամի**-ն (C. Buck, 1971³, 64), իսկ սրա համար բերվող հ.-ե. զուգահեռները շատ են. **խեթ**. **խսլլան**, **թոխ**. **U want**, **wānt**, **F yente**, լատ. **plentus**, գաղ. **gwnt**, գոթ. **winds**, հ. **թ**. **գեմը**. **wint** և այլն, որոնք դուրս են բերում հ.-ե. ***uδ-**, **uδ-** արմատի ***uδ-nto-s** ածանցային (Վ. Pokorny, 1959, 1, 82): Փորր-ինչ այլ նախածն են վերականգնում Գամկրելիձեն և Իվանովը՝ **Нллент[и]** (Т. Гамкреладзе, В. Иванов 1984, 1—2, 206, 677): Սրանով հայերենը, բնականաբար, մի կողմից կանգնում է նույն շարքում, ինչ և մյուս ցեղակիցները ակտիվ դասի անունների իրենց **-nt** կազմիչով, մյուս կողմից թույլ տալիս վերականգնել այլ նախածն՝ ***slunt[и]**, հայերենի համար օրինաչափ ***sl>δ** անցումով (Г. Джаякян, 1967: 287, 318):

Վերջապես, արժե հիշել, որ նախնիները **քրամի**-ն դիտել են իբրև աստվածային երեվույթ և այն համարել բնության աստվածության շնչառության արդյունք: Ուստի, բոլորովին պատահական չէ **շունչ** և **քրամի** իմաստությունների առնչակցումը: Հայ մատենագրու-

թիւն մը հաճախ տեղ է տրվել այս բացատրութիւնը, ինչպէս անուր է եզնիկը. «... այլ գիտեմք՝ եթէ այսն (հմմտ. էտրուսկ. ais «աւտված», հուն. ἦσι «քամի», հ. հնդկ. āyus «կենցարար ուժ», Գ. սրսկ. ayāz «զնփյուռ») հողմ է, և հողմն՝ ոգի, ըստ յառաջագոյն ամսցելոյ» (Եղծ աղագոյոց, 1, 194):

А. Г. МУШЕГЯН—Замечание по поводу одной этимологии.—Автор настоящей статьи опровергает этимологию проф. А. Маркаряна (ВЕУ, 1994, № 3, с. 131), касающуюся слова շնթնի, отмечая, что данное толкование (šən<šap форма род. пад. слова šup «собака»+t'əg<t'ag корень глагола t'arel «сесть, восседать»), основывается на попытках народной этимологии (Р. Ачарян, Ст. Малхасянц).

Такая этимология неприемлема хотя бы потому, что предполагаемый Маркаряном II компонент приведенных вариантов—*թնի/ի*,—*Բնի/ի*,—*Բննի* не однозначен, и скорее всего можно рассматривать в качестве II компонента лексемы не—*թնի* и т. д., а —*նի*,—*նի/ի*,—*ննի* и в этом случае восстанавливать I компонент в виде šunt'—предполагаемая дублетная форма слова šupc «дух». Весьма очевидно, что изучаемая форма аналогична часто встречающимся в грабаре, а также в среднеармянском—составным глаголам, в данном случае функционирующим как композита (šunt' arnul>šənt'ərel). Но для большей убедительности необходимо перейти к внешней реконструкции. Такая возможность представляется при сопоставлении двух генетико-идентичных семантем—«ветер» и «дух». Причем эта же лексема сохранилась во многих и.—е. языках: huanant «ветер», тох. A want, want, B yente, лат. pentus галл. gwnt, гот. wīnds, др.—в.—нем. wint и т. д.

Учитывая закономерный переход и.—е. *su>арм. š (Г. Джаукян, 1967; 287, 318), автор восстанавливает новую праформу—squnt[h].